# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ԻՏԱԼԻԱ




IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՏԱԼԻԱ

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է**: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

**Հրատարակիչ՝** Միգրացիայի միջազգային կազմակերպություն

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)**
**Հայաստանյան առաքելություն**
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
**Հեռ.՝** (+374 10) 58 56 92 • 58 37 86 • **Հեռապատճեն՝** (+374 10) 54 33 65
• **Էլ.փոստ՝** iom@arminco.com • http://www.iom.int/armenia

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Երկիր մուտք գործելու ընդհանուր պայմանները
և տեղեկություն վիզաների վերաբերյալ ......................... 5
2. Ներգաղթ աշխատանքի նպատակով ........................... 6
3. Ներգաղթ ուսման նպատակով .................................. 12
4. Բնակություն/կացություն ........................................... 15
5. Ապաստանի ընթացակարգը ..................................... 19
6. Ընտանիքի վերամիավորում ...................................... 20
7. Առողջապահության համակարգ ................................ 24
8. Սոցիալական ապահովագրության համակարգ......... 25
9. Բնակարանային պայմաններ .................................... 25
10. Դիպլոմների ճանաչում ........................................... 26
11. Միգրանտներին աջակցող ծառայություններ .......... 26
12. Քաղաքացիություն .................................................. 31

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
# ԻՏԱԼԻԱ

## 1. Երկիր մուտք գործելու ընդհանուր պայմանները և տեղեկություն վիզաների վերաբերյալ

### Վիզաների տեսակները

Իտալիայի իշխանությունները կարող են տրամադրել չորս տիպի վիզա: Վիզայի տեսակը նշվում է վիզայի դրոշմի հատուկ մասում և տարբերակվում է A, B, C կամ D տառերով:

<u>Օդանավակայանի տարանցիկ վիզա՝ «A» տիպի</u>
Այս տիպի վիզան թույլ է տալիս, որ օտարերկրացիները մուտք գործեն օդանավակայանի միջազգային տարանցիկ տարածք՝ իրենց հաջորդ չվերթին սպասելու համար, սակայն երկիր մուտք գործել չի թույլատրում:

<u>Տարանցիկ վիզա՝ «B» տիպի</u>
Այս տիպի վիզան թույլ է տալիս մի երկրից մյուսը ուղևորվող օտարերկրացիներին տարանցիկ ռեժիմով անցնել Շենգեն երկրների տարածքներով: Տարանցիկ վիզան տրվում է միայն այն դեպքում, երբ տվյալ անձը ներկայացնում է Շենգեն տարածքում գտնվելուց հետո այլ երկիր մուտք գործելու թույլտվություն: Վիզան կարող է տրվել մեկ, երկու, կամ, բացառիկ դեպքերում, բազմակի տարանցիկ երթևեկության համար՝ պայմանով, որ տարանցումներից և ոչ մեկը չգերազանցի վիզայի դրոշմի վրա նշված տվյալ երկրում մնալու օրերի քանակը: Ըստ սահմանված օրենքի տարանցիկ վիզան չպետք է գերազանցի հինգ օրը:

<u>Կարճաժամկետ վիզա՝ «C» տիպի</u>
Այս տիպի վիզայով օտարերկրացին կարող է մուտք գործել և մնալ Շենգեն տարածքում՝ զբոսաշրջության, գործնական կամ անձնական հարցերով կամ էլ նման այլ նպատակներով: Վիզան տրվում է մեկ, երկու կամ բազմակի այցելությունների համար, որոնց դեպքում երկրում գտնվելու ժամանակը (թե մեկ անընդհատ այցելության, թե մեկից ավելի այցելությունների հաջորդական օրերի գումարը) չպետք է գերազանցի 90 օրվան վեցամսյա ժամանակահատվածում՝ հաշված առաջին մուտքի օրվանից: Այժմ շատ տարբեր կարգերի դիմորդներ ևս (օրինական հիմունքներով երկրում բնակվողների ընտանիքի անդամները, ուսանողներն ու թոշակառուները, ժուռնալիստները և այլն) կարող են ձեռք բերել վիզա առանց վճարի: Որոշակի կարգի անձանց, օրինակ՝ գործարարների, ուսանողների կամ ժուռնալիստների համար,

փաստաթղթային պահանջները պարզեցված են: Հաճախակի ճամփորդող որոշակի կարգի անձանց (ներառյալ գործարարներ, ժուռնալիստներ, ուսանողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ) կտրամադրվեն բազմակի այցելության վիզաներ՝ երկարաժամկետ վավերականությամբ: Դիվանագիտական անձնագիր ունեցող անձինք կազատվեն վիզայի պարտավորությունից:

# 2. Ներգաղթ աշխատանքի նպատակով

## ա) Օտարերկրյա աշխատողների մուտքի և երկրում մնալու պայմանները

Իտալիայում աշխատելու համար անհրաժեշտ է նախաձեռնել հետևյալ քայլերը՝

- Ձեռք բերել աշխատանքի լիցենզիայի բնօրինակը՝ տրված Աշխատանքի նախարարության (Ufficio Provinciale del Lavoro) տեղի գրասենյակում՝ կնքված ոստիկանության կողմից: Լիցենզիան ձեռք է բերում իտալիայի գործատուն:
- Ձեռք բերել աշխատանքի վիզա՝ տրված Ձեր երկրում Իտալիայի հյուպատոսության կողմից,
- Ձեռք բերել կացության թույլտվություն՝ Իտալիա ժամանելուն պես աշխատելու համար:

<u>Աշխատանքի վիզա</u>
Դիմում ձևակերպելու համար անհրաժեշտ է առնվազն.

- անձնագիր՝ առնվազն 3 ամիս վավերականության ժամկետով հաշված վիզայի ժամկետի ավարտից,
- մեկ լուսանկար (վերջին),
- վիզայի ձևաթերթ՝ լրացված լատիներեն տպագիր մեծատառերով և ստորագրված դիմորդի կողմից,
- անձնագրի առաջին երկու էջերի պատճենը,
- աշխատանքի լիցենզիայի բնօրինակ՝ տրված 6 ամսից ոչ ուշ Աշխատանքի նախարարության (Ufficio Provinciale del Lavoro) տեղի գրասենյակում, կնքված ոստիկանության (Questura) կողմից՝ վկայական (Nulla Osta):

<u>Աշխատանքի համար կացության թույլտվությունը</u> տրվում է <u>աշխատանքային կացության պայմանագրի հիման վրա:</u> Թույլտվության ժամկետը համապատասխանում է <u>աշխատանքային կացության պայմանագրով</u> հաստատված ժամկետին, որը ժամկետային

պայմանագրերի դեպքում չի կարող գերազանցել մեկ տարին: Որպեսզի աշխատանքային պայմանագիրը Իտալիայի և երրորդ երկրի քացաքացու միջև վավեր լինի, այն պետք է պարունակի հետևյալը՝

- գործատուի կողմից երաշխիք՝ համապատասխան բնակարանային պայմանների առկայության վերաբերյալ
- գործատուի կողմից պարտավորվածություն՝ աշխատողի հետադարձ ճանապարհածախսը վճարելու վերաբերյալ:

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է գործատուի բնակության վայրի կամ էլ աշխատանքի կազմակերպման վայրի Ներգաղթի գրասենյակում (Sportello Unico per l'immigrazione): Երկիր մուտք գործելուց հետո 8 օրվա ընթացքում երրորդ երկրի քաղաքացին պետք է ներկայանա լիազորող Իմիգրացիայի գրասենյակը և ստորագրի կացության պայմանագիրը, ինչը կպահվի տեղում: Աշխատանքի համար կացության թույլտվություն ստանալուց հետո նա պետք է կանոնակարգի իր պաշտոնը Սոցիալական ապահովության ազգային ինստիտուտի և Աշխատանքային վթարների ապահովագրման ազգային ինստիտուտի հետ: Երրորդ երկրի քաղաքացին պետք է դիմի քաղաքապետարան՝ հաշվառման կանգնելու համար:

<u>Ինքնազբաղվածության վիզա</u>

Այս տիպի վիզայով կարող են Իտալիա մուտք գործել այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր, ունենալով անհրաժեշտ լիազորություններ, մտադիր են ինքնուրույն աշխատանքային գործունեություն ծավալել այնտեղ. հիմնականում ձեռներեցություն, վաճառականություն, արհեստներ:

Դիմելու համար անհրաժեշտ է առնվազն.

- վիզայի ձևաթերթ՝ լրացված լատիներեն տպագիր մեծատառերով և ստորագրված դիմորդի կողմից,
- անձնագրային չափսի մեկ լուսանկար (վերջին),
- անձնագիր՝ առնվազն 3 ամիս վավերականության ժամկետով՝ հաշված վիզայի ժամկետի ավարտից,
- Առևտրի պալատի կողմից տրված վկայական՝ որպես անհատ ձեռներեց, վաճառականի կամ արհեստավորի գործ սկսելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ, ինչը պետք է լինի ոչ պակաս քան Սոցիալական ծառայությունների կողմից հատկացվող տարեկան գումարը (4962,36 եվրո),
- վկայականի մեջ նշված ֆինանսական միջոցների Իտալիայում գտնվելը հավաստող փաստաթուղթ,

- պատշաճ բնակարանային պայմաններ՝ վավերացված հետևյալ փաստաթղթերով՝
  - բնակարանի պայմանագիր
  - տեղեկանք հիմնված թիվ 15 օրենքի (4.1.1968) 2-րդ և 4-րդ կետերի վրա,
  - տեղեկանք՝ նույն օրենքի հիման վրա Իտալիայի քաղաքացու կամ կանոնավոր կացության իրավունքով օտարերկրացու կողմից առ այն, որ վերջինս տրամադրում է վիզայի համար դիմողին պատշաճ բնակարան՝ համապատասխան բնակելի շենքերի մասին շրջանային օրենքով սահմանված նվազագույն պահանջներին:

- Ֆինանսական փաստաթուղթ՝ հստակորեն ներկայացնող նախկին բիզնեսի ֆինանսական վիճակը, որը համաձայն օրենքի (ավելի քան օրենքով սահմանված նվազագույնը, որի դեպքում ազատվում են առողջապահական վճարումներից) ներկայումս կազմում է տարեկան 8260 եվրո՝ վաստակած բնակության վայրում,
- Տեղի ոստիկանության (Questura) կողմից տրված վկայական (Nulla Osta) 90 օրվանից ոչ ավելի վաղեմության:

Աշխատողի հաշվառման քարտ

Բոլոր աշխատողները Աշխատանքի նահանգային տեսչությունից (Inspettorato Provinciale del Lavoro) ձեռք են բերում աշխատողի հաշվառման քարտ (libretto di lavoro), որն ուժի մեջ է 10 տարի:
Այս գրքույկը պահանջվում է օրինական հիմունքներով աշխատելու համար: Գրքույկում գրանցումներ են կատարվում բոլոր աշխատանքների մասին՝ նշելով դրանց տևողությունը, սկիզբը և ավարտը:

## բ) Աշխատանքային շուկայում պահանջարկ ունեցող սեկտորները

Իտալիան ունի բազմաճյուղ արդյունաբերական տնտեսություն: Հիմնական ոլորտներն են զբոսաշրջությունը, մեքենաշինությունը, երկաթի և պողպատի արդյունաբերությունը, քիմիկատների, սննդամթերքի, տեքստիլ արտադրանքի, ավտոմեքենաների, հագուստի, կոշկեղենի և կերամիկայի արտադրությունը:
Երկիրը բաժանված է երկու հատվածի՝ զարգացած արդյունաբերական հյուսիսի (ուր գերակշռում են մասնավոր ընկերությունները) և պակաս զարգացած գյուղատնտեսական հարավի: 2005 թ. երկիրը տնտեսական աճ գրեթե չի ունեցել, իսկ գործազրկության մակարդակը դեռևս բարձր է

եղել: Ըստ պաշտոնական տվյալների, 2008 թ. գործազրկությունը կազմել է 6,1 տոկոս:
Իտալիայի որոշ հարավային շրջաններում այն հասնում է մինչև 50 տոկոսի:

Պահանջվող որակավորումներ

Իտալիայում աշխատելու համար պահանջվող ամենակարևոր ունակությունը իտալերեն խոսելն է: Տնտեսության ոլորտներից մեծ մասում աշխատանք ունենալու համար պահանջվում է ունենալ մասնագիտական կամ առևտրի բնագավառի որակավորումներ: Հաճախ որակավորում է պահանջվում նաև ինքնազբաղվածության կամ բիզնես հիմնելու համար: Սահմանված են տուգանքներ ճանաչված վկայական չունեցող աշխատողների համար, օրինակ՝ մեծ գումարի դրամական տուգանք, սարքավորումների կամ գործիքների բռնագրավում, արտաքսում երկրից, երկար տարիների արգելք երկիր մուտք գործելու հանդեպ:

Որոշ իտալական գործակալություններ գտնում են աշխատատեղեր միայն Իտալայի, ԵՄ երկրների կամ կացության թույլտվությամբ օտարերկրյա քաղաքացիների համար: Նման գործակալություններում գրանցվելու համար դիմորդը պետք է ունենա երկրում մնալու թույլտվություն, ֆիսկալ կոդ հարկ վճարողի համար և աշխատանքային գրքույկ: Դիմորդը պետք է ձևաթերթ լրացնի իտալերեն լեզվով, ինչպես նաև հանձնի իտալերեն գրված ինքնակենսագրություն (CV), և անձնագրային չափսի լուսանկար:
Իտալիայի տարբեր շրջանների աշխատաշուկաների մասին տեղեկանալու համար այցելել հետևյալ կայքէջը՝
http://europa.eu.int/eures/main.jsp?acro=lmi&lang=en&parentId=0&countryId=IT

Աշխատատանք գտնելու որոշ աղբյուրներ՝

**Corriere della Sera** (Միլանում լույս տեսնող օրաթերթ)
Ամեն ուրբաթ հրապարակում է աշխատանքի թափուր տեղերի հայտարարություններ՝ տեղակայված
http://www.corriere.it/lavoro/index.html կայքէջում (միայն իտալերեն):

**Il Sole 24 Ore** (ֆինանսական թերթ)
թափուր տեղերի տվյալների բազա՝ տեղակայված
http://job24.ilsole24ore.com/ կայքէջում (միայն իտալերեն)

Bollettino Del Lavoro - ամենամսյա հրապարակում` տեղակայված ww.bollettinodellavoro.it կայքում (միայն իտալերեն)

## Աշխատանքի թափուր տեղերի իտալական կայքէջեր`

www.alispa.it
www.bancalavoro.com
www.executivenetwork.it
www.fionline.it
www.informagiovani.it
www.job-net.it
www.jobline.it
www.jobs.it

## գ) Քվոտաներ և երկկողմ համաձայնագրեր (առկայության դեպքում)

Քվոտաների համակարգը

Ամեն տարի Իտալիայի վարչապետը հրամանագրով հրապարակում է առավելագույն թիվը և ազգությունը այն օտարերկրացիների (ԵՄ ոչ-անդամ երկրներից), ովքեր կարող են մուտք գործել երկիր` աշխատելու նպատակով:
Կախված հեռավորությունից, միգրացիոն հոսքերից ինչպես նաև գոյություն ունեցող երկկողմ համաձայնագրերից, որոշակի երկրների հանդեպ սահմանված են հատուկ քվոտաներ: Ձեր երկրի քվոտաների վերաբերյալ կարող եք տեղեկանալ Իտալիայի մոտակա դեսպանությունում:
Ոչ սեզոնային աշխատանքների քվոտաների մասին տեղեկանալու համար այցելեք http://www.interno.it/mininterno/export/sites/default/it/sezioni/sala_stampa/speciali/decreto_flussi_2007/index.html կայքէջը (միայն իտալերեն):

## դ) երեխայի խնամքի և օտարերկրյա աշխատուժ պահանջող այլ առանձնահատուկ ծրագրեր

Սեզոնային զբաղվածություն (ենթակա է քվոտաների)

Ռեստորաններում, հյուրանոցներում, զբոսաշրջության հանգստավայրերում աշխատուժի կարիք է զգացվում ծանրաբեռնված սեզոններին. ամռանը` ծովափնյա և լճափնյա, իսկ ձմռանը` լեռնային գոտու հանգստավայրերում աշխատելու համար: Հյուրանոցների ցանկը

կարելի ծեռք բերել զանազան քաղաքների տուրիստական գրասենյակներից: Դիմումը պետք է ուղարկել տարվա սկզբին: Պետք է նաև կցեք նամակ, որի մեջ ներկայացվում են հետևյալ անձնական տվյալները. Ձեր ծննդյան թիվը և վայրը, կրթության աստիճանը, օտար լեզուների իմացությունը, աշխատանքային փորձը, հիմնական հետաքրքրությունը, երաշխավորող անձանց անունները և մի լուսանկար: Տուրիստական ավաններում առաջարկվում են գործատեղեր հետևյալ բնագավառներում՝ դերասանություն, լող, պար, թենիս, սերֆինգ, ծիավարություն և այլն:
Տուրիստական գյուղերը կառավարող գլխավոր կազմակերպություններն են.

CLUB MED.
Via Pascoli 60,
20123 Milano, Italy

ALPITOUR ITALIA
Viale Maino 42
20129 Milano, Italy

VALTUR
Viale Milano 42
00184 Roma, Italy

FRANCOROSSO INTERNATIONAL
Via C. Colombo 440
00145 Roma, Italy

**Իտալիայում սեզոնային աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է ունենալ.**

- աշխատելու վերաբերյալ լիազորագիր,
- սեզոնային աշխատանքի վիզա,
- կացության թույլտվություն՝ սեզոնային աշխատանքի համար:

<u>Սեզոնային աշխատանքի թույլտվություն</u>

Երկրում մնալու թույլտվություն տրամադրվում է այն դեպքում, երբ դրա համար դիմում է

1. իտալացի կամ օրինական հիմունքներով Իտալիայում բնակվող օտարերկրյա գործատուն կամ՝
2. առևտրի ասոցիացիան՝ ի դեմս փոխկապակցված կողմի:

Իտալացի կամ օրինական հիմունքներով Իտալիայում բնակվող օտարերկրյա գործատուն կամ էլ առևտրային ասոցիացիան, ի դեմս իր փոխկապակցված անձի, որ մտադիր է սեզոնային աշխատանքային հարաբերություններ հաստատել Իտալիայում, պետք է Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության տեղի բաժանմունք ներկայացնի գրանցված պահանջագիր:
Նույն բաժանմունքը 15 օրվա ընթացքում հատկացնում է լիազորագիր՝ նվազագույնը 20 օր և առավելագույնը 6-9 ամիս վավերականության ժամկետով. կախված պահանջվող սեզոնային աշխատանքի տևողությունից: Այս լիազորագրի (որը ուղարկվում է Ձեր երկիր) հիման վրա Ձեզ տրամադրվում է մուտքի վիզա Իտալիայի դեսպանատանը կամ հյուպատոսական հիմնարկում: Վիզան թույլ է տալիս Իտալիայում գտնվելիս ձեռք բերել աշխատանքի թույլտվություն պայմանավորված ժամկետների համար:

<u>Երեխայի խնամքի ծրագրեր</u>
http://aupair-visa-italy.greataupair.com/
http://www.newaupair.com/jobs_nannies_italy.aspx

# 3. Ներգաղթ ուսման նպատակով

## ա) Ուսանողների երկիր մուտք գործելու և մնալու պայմանները

<u>Ուսանողական վիզա</u>

Այս տիպի վիզայով թույլատրվում է այն օտարերկրացիների մուտքը Իտալիա, ովքեր ցանկանում են ստանալ համալսարանական կրթություն կամ հաճախել կատարելագործման դասընթացների ճանաչված կամ որակավորում ստացած ինստիտուտներում:

Վիզայի դիմումի համար անհրաժեշտ նվազագույն թվով փաստաթղթեր՝
- անձնագիր՝ առնվազն 3 ամիս վավերականության ժամկետով, հաշված վերադարձի կանխատեսված ժամկետից,
- մեկ լուսանկար (վերջին),
- վիզայի ձևաթերթ՝ լրացված լատիներեն տպագիր մեծատառերով և ստորագրված դիմորդի կողմից,
- անձնագրի առաջին երկու էջերի պատճենը,
- նախկինում տրված Շենգեն վիզաների պատճենները,
- փաստաթղթեր դասընթացի, կատարելագործման ծրագրի, մշակութային կամ գիտական գործունեության անհրաժեշտության վերաբերյալ,

- իտալական համալսարանի կողմից ընդունելությունը հաստատող Տեղեկանք (բնագիր) - համալսարանը պետք է ճանաչված լինի Իտալիայի իշխանությունների կողմից,
- Ողջ դասընթացի համար կատարված վճարման անդորրագիր - եթե դասընթացը վճարովի է,
- Վերադարձի ինքնաթիռի տոմս և պատճեն,
- Առողջապահության և բուժսպասարկման ապահովագիր, որ վավեր է Եվրոպայում (մի քանի տարի կամ ավելի երկարատև ուսումնառության դեպքում ապահովագրության վճարումները կարելի է կատարել տեղում՝ Իտալիայում),
- Առողջապահության գրքույկը և դրա առաջին երկու էջերի պատճենը,
- բավարար երաշխիքներ, որոնք վկայում են դիմորդի ֆինանսական միջոցների առկայությունը (բնակության ողջ ընթացքում անհրաժեշտ ծախսերը հոգալու համար),
- փաստաթուղթ (նամակ վերադասի կամ դասախոսի կողմից), որում նկարագրվում է, թե տվյալ ուսանողը ինչպես կշահի հետագա կրթության կամ աշխատանքի մեջ:

Եթե ուսանողը ֆինանսական օժանդակություն է ստանում ծնողներից, ապա պետք է ներկայացնի.

- համալսարանի կողմից ուսանողի տվյալ ուսումնական տարում ընդգրկված լինելը վավերացնող տեղեկանքի բնօրինակ, անցած կիսամյակների և քննությունների արդյունքներից քաղվածք, ծնողների զբաղվածության կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք (M1, M2 (կոնկրետ ընկերության հետ աշխատանքային հարաբերությունները հաստատող), աշխատանքային գրքույկ, հուշագիր և որևէ այլ փաստաթուղթ, որը վերաբերում է ծնողների աշխատանքային կամ տնտեսական գործունեությանը, ֆինանսական միջոցներին (բանկային հաշվեկշիռ, բանկային հաշիվներ, անշարժ գույք և այլն),
- Միայն երկարատև (մի քանի տարի) կրթական ծրագրերի դեպքում (օրինակ՝ համալսարան, կոնսերվատորիա, ակադեմիա և այլն) - անհրաժեշտ է ունենալ գումար մեկ ուսումնական տարվա համար՝ մոտավորապես 4300 եվրո:

Հետևյալ կայքում կգտնեք լրացուցիչ տեղեկություն Իտալիայի համալսարանների և քոլեջների վերաբերյալ՝
http://www.geocities.com/javedsimi/college/coll-italy.html
Իտալիայի դեսպանատները ամեն տարի ամռան ընթացքում հրապարակում են երկարատև ուսումնառության և դասընթացների, համալսարանների վերաբերյալ տեղեկատվական նյութեր: Այցելեք

հետևյալ կայքերը՝ www.ambtirana.esteri.it; www.ambsarajevo.esteri.it; amb.zagabria@esteri.it; www.ambskopje.esteri.it; www.ambbelgrado.esteri.it:
Իտալիայի համալսարանների, դասընթացների, կրթաթոշակների և այլնի վերաբերյալ տեղեկության համար այցելեք www.miur.it կայքէջ:

## բ) ծրագրեր և կրթաթոշակներ օտարերկրյա ուսանողների համար

### «Էրազմուս Մունդուս» ծրագիր

«Էրազմուս Մունդուս» ծրագիրը հնարավորություն է տալիս ԵՄ անդամ, ինչպես նաև ոչ անդամ պետությունների ուսանողներին հաճախել եվրոպական բարձր մակարդակի, ինտեգրացված/ամբողջական մագիստրատուրայի դասընթացներին և ստանալ կրթաթոշակ: Տես՝ http://europa.eu.int/comm/education/programmes/mundus/index_en.html կայքը: Կարող եք դիմել «Էրազմուս Մունդուս» մագիստրատուրայի իտալական համալսարանների կողմից իրականացվող ծրագրերին՝ (http://www.erasmusmundus.it/):
Ընդունված ուսանողների համար կան «Էրազմուս Մունդուս» կրթաթոշակներ. տես՝ http://ec.europa.eu/education/programmes/mundus/projects/index_en.html:
Եթե Դուք բուհական կրթությամբ ուսանող եք «երրորդ երկրի» որևէ պետությունից (աշխարհի բոլոր երկրները, բացառությամբ Եվրամիության 27 անդամ պետությունների, Իսլանդիայի, Նորվեգիայի, Լիխտենշտեյնի, Խորվաթիայի, Թուրքիայի և նախկին Մակեդոնիայի Հարավսլավական Հանրապետության), ապա կարող եք դիմել «Էրազմուս Մունդուս» կրթաթոշակի համար: Կրթաթոշակները հատկացվում են մրցույթով ընտրված լավագույն ուսանողներին: Կրթաթոշակը ներառում է ձեր ճանապարհածախսը, կենսապահովումը Եվրոպայում և ուսման վարձը կրթական ծրագրի ողջ ընթացքում:

### «Պատուհան» ֆոնդեր (առանձին երկրների համար)

«Պատուհան» ֆոնդերը համայնքի արտաքին կապերի բյուջեից գոյացած հավելյալ ֆոնդեր են, որ ներարկվում են «Էրազմուս Մունդուս» ծրագրին՝ ԵՄ ոչ-անդամ առանձին պետությունների ուսանողներին Եվրոպայում սովորելու հնարավորություն ընձեռնելու համար: «Պատուհանները» նախատեսված են այդ երկրների ուսանողներին կրթաթոշակ հատկացնելու համար: Սակայն սա չպետք է խանգարի «Էրազմուս Մունդուս»-ի «սովորական» բյուջեով նույն երկրներից ուսանողների ընտրություն անելուն:

Հետևաբար «պատուհան» ֆոնդերը գումարվում են «սովորական» կրթաթոշակներին և հնարավորություն տալիս լրացուցիչ կրթաթոշակներ հատկացնելու որոշակի պետություններից դիմող ուսանողներին: Տես՝ http://ec.europa.eu/education/programmes/mundus/univ/country_en.html
Մանրամասն տեղեկանալու համար այցելեք հետևյալ կայքը՝ http://ec.europa.eu/education/programmes/mundus/faq/index_en.html

**Մարդու իրավունքների և ժողովրդավարության միջհամալսարանական եվրոպական կենտրոնը** (EIUC) հիմնադրվել է 2002 թ. սեպտեմբերի 15-ին Վենետիկում: Կենտրոնի գործունեության նպատակն է ապահովել ինստիտուցիոն հիմնադրամ և անկախ կառավարում «Մարդու իրավունքների և ժողովրդավարության եվրոպական մագիստրատուրայի» (EMA) համար:
Դիմումի հայտերի և այլ տեղեկությունների համար այցելեք www.ema-humanrights.org; www.eiuc.org կայքերը կամ դիմեք EIUC/EMA - ի Սան Նիկոլո մենաստանի քարտուղարություն հետևյալ հասցեով՝ EIUC/EMA Secretariat at Monastery of San Nicolo - Riviera San Nicolo 26, 30126 Venice, The Lido, Italy,
tel: +39 041 2720911, fax: +39 041 2720914,
E-mail: secretariat@emahumanrights.org

**Եվրոպական ռեգիոնալ մագիստրոսի աստիճան «Ժողովրդավարությունը և մարդու իրավունքները Հարավ-արևելյան Եվրոպայում».** Սարաևո-Բոլոնիա
Եվրոպական ռեգիոնալ մագիստրոսի աստիճան շնորհող «Ժողովրդավարությունը և մարդու իրավունքները Հարավ-արևելյան Եվրոպայում» ծրագիրը մեկամյա ինտենսիվ մագիստրատուրա է՝ հիմնադրված մասնակից համալսարանների համատեղ ջանքերով և համակարգվում է Սարաևոյի և Բոլոնիայի համալսարանների կողմից:
Հասցե՝ Center for Interdisciplinary Postgraduate Studies, University of Sarajevo Zmaja od Bosne 8, Student Campus 71 000 Sarajevo, Bosnia and Herzegovina
Tel: + 387 33 668 685, Fax: + 387 33 668 683
E-mail: coordination@cps.edu.ba

## 4. Բնակություն/կացություն

Օրինական կարգով Իտալիա մուտք գործող բոլոր օտարերկրացիները, ներառյալ այն անձինք, որոնցից վիզա չի պահանջվում, պետք է ենթարկվեն երկրում մնալու վերաբերյալ գործող կանոնակարգին: Սկսած 2007 թ. հունիսի 2-ից, համաձայն թիվ 68 օրենքի (28-ը մայիսի 2007 թ.),

եթե օտարերկրյա քաղաքացին ուզում է մնալ Իտալիայում առողջապահական, զբոսաշրջության, բիզնեսի կամ ուսման նպատակով **3 ամսից պակաս ժամանակով**, ապա կացության թույլտվություն (Permesso di Soggiorno) պահանջելը իր համար պարտադիր չէ: Սակայն նա պարտավոր է տեղեկացնել Իտալիայի տարածքում իր գտնվելու մասին համաձայն Իտալիայի ներքին գործերի նախարարության 2007 թ. հուլիսի 26-ի հրամանագրի, որում ասված է.
«Ոչ-Շենգեն երկրների քաղաքացիների համար՝ Իտալիա մուտք գործելու պահին ճամփորդական փաստաթղթի վրա Շենգեն կնիքը բավարար է»:
«Շենգեն երկրների քաղաքացիները պարտավոր են Իտալիայի տարածքում գտնվելու մասին հատուկ ձևաթերթով տեղեկացնել Կենտրոնական ոստիկանության (Questura) նահանգային բաժանմունք 8 օրվա ընթացքում՝ հաշված երկիր մտնելու օրվանից»:

Եթե օտարերկրացու Իտալիայում մնալու ժամանակը **գերազանցում է 3 ամիսը**, ապա նա պարտավոր է դիմել կացության թույլտվության համար, որը համաձայն 1998 թ. թիվ 286 օրենքի 5-րդ հոդվածի իրեն ընձեռնում է կացության իրավունք:

ԵՄ անդամ երկրների քաղաքացիների համար 3 ամսից ավելի Իտալիայում մնալու համար կացության թույլտվություն պարտադիր չէ:
Ըստ Շենգեն կանոնների, երկարաժամկետ վիզա ունեցող օտարերկրացիներին Ոստիկանության կողմից տրված կացության թույլտվությունը (կամ Արտաքին գործերի նախարարության կողմից տրված դիվանագիտական աշխատողների անձը հաստատող քարտը) թույլ է տալիս նրանց (եթե չկան հատուկ սահմանափակումներ) մուտք և ելք գործել Շենգեն երկրներ, ազատ երթևեկել առավելագույնը 90 օր վեցամսյա ժամանակահատվածում, եթե ունեն վավեր անձնագիր (իրենց երկրի) կամ դրան համարժեք ճամփորդական փաստաթուղթ: Այնուհանդերձ բոլոր օտարերկրացիները պարտավոր են տեղեկացնել Ոստիկանությանը իրենց Շենգեն տարածքում գտնվելու մասին մուտք գործելուն հաջորդող 3 օրերի ընթացքում:

Կացության թույլտվության համար կարելի է դիմել **փոստային բաժանմունք, բացառապես միայն այն դեպքում, եթե այն կրում է “Sportello Amico” խորհրդանշանը/լոգոն** ստորև թվարկված դեպքերում.

**ա. Աշխատանք՝** տես կետ 3

**բ. Բիզնես՝** տրվում է ԵՄ ոչ-անդամ երկրների քաղաքացիներին, որ մուտք են գործում Իտալիա առևտրատնտեսական պատճառներով, այդ թվում առևտրի, պայմանագրերի կամ բանակցությունների, իմանալու

կամ վավերացնելու ձեռք բերված կամ առևտրի պայմանագրով կամ արդյունաբերական համագործակցությամբ վաճառված ակցիաների գործածումը: Կացության թույլտվության ժամանակահատվածը համապատասխանում է մուտքի վիզային և չի կարող գերազանցել երեք ամիսը:

### գ. Ընտանիքի վերամիավորում

### դ. Ինքնազբաղվածություն

### ե. Ուսում

### զ. Հրավեր

Սա ԵՄ-ից դուրս երկրների քաղաքացիներին տրվող կարճաժամկետ կացության թույլտվություն է՝ տրված պետական կամ մասնավոր հաստատության/կազմակերպության կողմից քաղաքական, գիտական, մշակութային միջոցառումների կամ ցուցահանդեսների մասնակցելու հրավերի հիման վրա: Ապրելու ծախսերը ստանձնում է հրավիրող կողմը:

### է. Առաքելություն

Այս տիպի կացության թույլտվությունը տրվում է ԵՄ-ից դուրս երկրների քաղաքացիներին բնակվելու Իտալիայում կամ այլ Շենգեն երկրում ոչ ավելի քան 90 օր՝ քաղաքական կամ կառավարական գործառույթներ իրականացնելու նպատակով:

### ը. Արհեստ սովորելու ծրագիր

Այս տիպի կացության թույլտվությունը տրվում է ԵՄ ոչ-անդամ երկրների քաղաքացիներին «արհեստ սովորելու պայմանագրի» շրջանակներում Իտալիայում կարճատև բնակության համար՝ որոշված գործատուի կողմից:

### թ. Ընտանեկան պատճառներ

Թույլ է տրվում ԵՄ-ից դուրս երկրների քաղաքացիներին Իտալիա ուղեկցել կամ այցելել ազգականներին:

### ժ. Որդեգրում

Այս կետով թույլ է տրվում ԵՄ-ից դուրս երկրների այն քաղաքացիներին, ովքեր որդեգրվել են կամ գտնվում են Իտալիայի քաղաքացու խնամակալության տակ՝ համաձայն ծագման երկրում սահմանված օրենքի, մնալ Իտալիայում:

**ի. Կրոն**
Այս կետով թույլ է տրվում ԵՄ ոչ-անդամ երկրների հավատացյալ քաղաքացիներին մասնակցել Իտալիայում անցկացվող հոգևոր բնույթի կրոնական միջոցառումներին:

**լ. Ընտրյալ կացություն**
Այս կետով թույլ է տրվում տվյալ անձին բնակություն հաստատել Իտալիայում:

Բոլոր ստորև բերված պատճառների դեպքում կացության թույլտվության համա պետք է դիմել **Կենտրոնական ոստիկանության տեղի բաժանմունքը (Questura).**

**խ. Բուժում**
Այս կետով թույլ է տրվում ԵՄ-ից դուրս երկրների քաղաքացիներին բուժում ստանալ Իտալիայում՝ պետական կամ մասնավոր բուժհիմնարկում:

**ծ.Սպորտային միջոցառում**
Թույլատրվում է մասնագիտացված սպորտային գործունեություն Իտալիայում:

**կ. Զբոսաշրջություն**
Այս տիպի թույլտվությունը տրվում է երրորդ երկրի քաղաքացիներին՝ Իտալիայում զբոսաշրջության առիթով մնալու համար: Այն անձանց համար, ովքեր վիզայով են մուտք գործում երկիր, կացության թույլտվության ժամկետը համընկնում է վիզայի վրա նշվածին: (Երրորդ երկրի քաղաքացիները կացության թույլտվություն պետք է ստանան 8 աշխատանքային օրվա ընթացքում տեղի Ոստիկանության բաժանմունքից )

**հ. Մարդասիրական գործունեություն**

**ձ. Ապաստան** (նույնպես դիմելով)

**ղ. Երեխաներ** (18 տարեկանից փոքր)

**ճ. Apolide կարգավիճակ (քաղաքացիություն չունեցողի)**

**մ. Արդարադատության հարցեր**

Կացության թույլտվության դիմումը ստանալուց հետո, Կենտրոնական ոստիկանության տեղի Ներգաղթի բաժանմունքը կապվում է դիմորդին էլեկտրոնային փոստով կամ sms կապով (կախված դիմումի մեջ նշված միջոցից) հանդիպում նշանակելու համար, որպեսզի ստանա թույլտվությունը ամբողջացնելու համար պարտադիր տվյալները (լուսանկար և մատնահետքեր):
Մանրամասն տեղեկությունների համար այցելեք՝
http://esteri.it (անգլերեն)
http://www.interno.it (իտալերեն)
http://rome.angloinfo.com/countries/italy/residency.asp#permit
http://www.poliziadistato.it/pds/ps/immigrazione/soggiorno.htm (իտալերեն)

Թույլտվությունը պետք է նորացվի նախապես՝ ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ: Պահանջվող փաստաթղթերը կարող են լինել նույնը, ինչ առաջին դիմումի դեպքում. ներառյալ վերջին լուսանկարները: Թույլտվությունը նորացվում է բնակության վայրի Ոստիկանության բաժանմունքում: Նորացված փաստաթուղթը կարող է ունենալ վավերականության տարբեր ժամկետներ, կախված նրանից, թե տվյալ անձը որքան ժամանակ է գտնվել Իտալիայում:
Վեց տարվա բնակությունից հետո, օտարերկրացին կարող է պահանջել «Carta di Soggiorno» տիպի թույլտվություն, որով կարող է երկրում մնալ անորոշ ժամանակով:

# 5. Ապաստանի ընթացակարգը

Ապաստանի վերաբերյալ որոշումները կայացնում է Փախստականների կարգավիճակի ճանաչման կենտրոնական հանձնաժողովը: Սովորական ընթացակարգի համատեքստում ապաստան խնդրողին տրվում է հետևյալը. ժամանակավոր կացության փաստաթուղթ (վավեր է 3 ամիս, կարող է նորացվել հանձնաժողովի հայեցողությամբ), 45 օրվա համար օրական 17 եվրոյի հաշվարկով գումար, որոշակի դեպքերում նաև նպաստներ՝ ներառյալ կացարան Ընդունման ազգային ծրագրի շրջանակներում: Ապաստան խնդրող անձանց չի թույլատրվում աշխատել:
Հանձնաժողովի բարվոք արձագանքի դեպքում, ապաստան խնդրողին, ելնելով մարդասիրական հիմունքներից և կախված իրավիճակից, տրվում է փախստականի վկայական կամ կացության թույլտվություն: Եթե դիմումը մերժվում է, ապա ապաստան խնդրողը ստանում է երկիրը 15 օրվա ընթացքում լքելու արտաքսման կարգադրություն. եթե չի կցված դատական որոշում կարգադրությունն անմիջապես ի կատար ածելու մասին: Այնուհանդերձ կարելի է որոշումը բողոքարկել, ինչը սակայն չի

կասեցնում այն, պայմանով եթե դրա համար առանձնահատուկ պահանջ չի ներկայացվում:
Անվճար իրավաբանական օժանդակություն տրամադրվում է ֆինանսական միջոցներից զուրկ դիմորդներին, ովքեր ուզում են բողոքարկել Կենտրոնական հանձնաժողովի բացասական որոշումը: Անվճար իրավաբանական օժանդակության դիմումները պահպանվում են Անվճար իրավաբանական օժանդակության հանձնաժողովի մոտ:
Ճանաչված փախստականները օգտվում են նույն իրավունքներից, ինչ Իտալիայի քաղաքացիները.

- կրթության,
- դատարանների և օրենսդրական համակարգի,
- առողջապահության և սոցիալական ապահովության,
- աշխատանքի և սոցիալական ապահովության,
- հարկման:

Նրանք կարող են ստանալ Իտալիայի քաղաքացիություն 5 տարվա բնակությունից հետո և ունենալ ընտանիքների հետ վերամիավորվելու ավելի հեշտ հնարավորություն: Տես՝
http://www.migramedia.it/mie_cartelle/ducumenti/informated_migration/7_IT.pdf

# 6. Ընտանիքի վերամիավորում

## Ընտանիքի վերամիավորում օրինական հիմունքներով Իտալիայում բնակվող օտարերկրացու հետ

Համաձայն նոր կանոնակարգի (օրենսդրական հրամանագիր 160/2008թ.) հետևյալ կարգի անձինք կարող են դիմել Իտալիայում օրինական հիմունքներով բնակվող միգրանտի հետ ընտանիքի վերամիավորման համար՝

- կին/ամուսին, եթե օրենքով բաժանված չեն և հասուն տարիքի են,
- կնոջ/ամուսնու անչափահաս երեխաները կամ անգամ ամուսնությունից դուրս ծնված երեխաները, որոնք ամուսնացած չեն, պայմանով, որ մյուս ծնողը (առկայության դեպքում) տա իր համաձայնությունը,
- խնամարկյալ երեխաներ, ովքեր օբյեկտիվ պատճառներով չեն կարող ինքնուրույն հոգալ իրենց կենսապահանջները, անկարողունակության տանող առողջական վիճակի պատճառով,
- խնամարկյալ ծնողներ, ովքեր ուրիշ երեխաներ չունեն իրենց երկրում,

- 65 տարեկանից մեծ ծնողներ, եթե մյուս երեխաները ի վիճակի չեն նրանց խնամքն ապահովել փաստաթղթով հիմնավորված լուրջ առողջական պատճառներով,
- 65 տարեկանից մեծ ծնողի հետ վերամիավորվելու դեպքում, ծնողը պետք է ունենա առողջապահական ապահովագրություն կամ պետք է անդամագրվի Ազգային առողջապահական ծառայությունների վճարովի համակարգին:

Վկայական չունենալու կամ եղածի իսկությանը կասկածելու դեպքում, Իտալիայի դեսպանությունները կտրամադրեն վկայական տեղում՝ դնթ-ի անալիզի հիման վրա (դիմորդից գանձելով անալիզի վճարը):

Ինչ վերաբերում է եկամուտին, այն պետք է կազմի ոչ պակաս քան Սոցիալական ծառայութունների հատկացրած տարեկան նպաստը՝ գումարած դրա կեսը, հաշվարկված վերամիավորվող ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար: 14 տարեկանից ցածր երկու կամ ավելի երեխաների, ինչպես նաև երկու և ավելի անդամների վերամիավորման համար, լրացուցիչ պաշտպանության կարգավիճակ ունեցողներից պահանջվում է ունենալ սոցիալական նպաստի կրկնակիից ոչ պակաս տարեկան եկամուտ, յուրաքանչյուր դեպքում: Եկամտի չափը որոշելիս հաշվի է առնվում ընտանիքի անդամների տարեկան եկամտի ընդհանուր գումարը, այդ թվում՝ դիմորդինը:

Եվ վերջինը՝ մուտքի թույլտվության սպասման ժամկետը 180 օր է:

## Անհրաժեշտ փաստաթղթեր

Անհրաժեշտ փաստաթղթեր ընտանիքի վերամիավորման բոլոր դեպքերի համար.

- լրացված վիզայի ձևաթերթ՝ ստորագրված դիմորդի կողմից,
- անձնագրային չափսի լուսանկար (վերջին),
- անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ՝ առնվազն 3 ամսվա վավերականությամբ, հաշված վիզայի ժամկետի ավարտից,
- անձնագրի պատճեն,
- մուտքի թույլտվություն (Nulla Osta)՝ 6 ամսից ոչ ավելի վաղեմությամբ, տրված իրավասու Միացյալ ներգաղթի գրասենյակի կողմից (Sportello Unico),
- անչափահաս երեխաների դեպքում՝ գրավոր համաձայնություն երեխայի մյուս ծնողի կողմից (վիզա ստանալու համար):

Կախված ընտանիքի վերամիավորման դեպքերից՝ կարող են պահանջվել նաև հետևյալ լրացուցիչ փաստաթղթերը.

1. **Ամուսինների դեպքում՝**
   - ամուսնության վկայական՝ երեք ամսվա վավերականությամբ,

- Իտալիայում օրինական կարգով բնակվող ընտանիքի վերամիավորման համար դիմող անձի կացության թույլտվության պատճեն,

2. **Անչափահաս երեխաների դեպքում՝**
- երեխայի ծննդյան վկայականը (լուսանկարով),
- ընտանիքի կազմի վկայական,
- ծնողի կացության թույլտվության պատճեն (եթե միայն մեկ ծնողն է Իտալիայի բնակիչ, ապա մյուս ծնողը պետք է ներկայացնի վիզա ստանալու համար համաձայնության նամակ՝ գրված նոտարի կողմից, թարգմանված և հաստատված նոտարական գրասենյակում և օրինականացված համապատասխան մարմինների կողմից),
- եթե ծնողները բաժանված են ըստ օրենքի, անհրաժեշտ է ներկացնել ամուսնալուծության վկայականը և մյուս ծնողի կողմից համաձայնության նամակ:
- եթե ծնողներից մեկը մահացած է, ապա պետք է ներկայացնել մահվան վկայականը:

3. **Խնամարկյալ չափահաս անկարողունակ երեխաների դեպքում՝**
- բժշկական փաստաթուղթ՝ տրված Իտալիայի դեսպանության լիազոր բժշկի կողմից,
- ծննդյան վկայական (լուսանկարով),
- ընտանիքի կազմի վկայական:

4. **Խնամարկյալ ծնողների դեպքում (երեխաների հետ ընտանեկան վերամիավորում պահանջող)՝**
- Իտալիայում բնակվող որդու/դստեր ծննդյան վկայական,
- ծնողների ընտանիքի կազմի վկայական,
- Իտալիայում բնակվող որդու/դստեր կացության թույլտվության պատճեն՝ նոտարական թարգմանությամբ և հաստատված երկրի դիվանագիտական/հյուպատոսական հիմնարկում,
- բժշկական փաստաթուղթ՝ տրված Իտալիայի դեսպանության լիազոր բժշկի կողմից, որով ապացուցվում է, որ մյուս երեխաները, լուրջ առողջական պատճառներով, ի վիճակի չեն ծնողների խնամքը հոգալ:
- գույքի սեփականության վկայական (առկայության դեպքում),
- թոշակի վկայական (առկայության դեպքում),
- նամակ գործատուի կողմից, որում նշվում է աշխատանքի ընդունման ժամկետը, պայմանագրի տեսակը, զբաղեցրած պաշտոնը, աշխատանքից բացակայելու թույլտվությունը:

Ինքնազբաղվածների դեպքում պահանջվում է այն հաստատող փաստաթուղթ:

5. **65 տարեկանից մեծ ծնողների դեպքում (եթե մյուս երեխաները ի վիճակի չեն նրանց խնամքն ապահովել՝ փաստաթղթով հիմնավորված լուրջ առողջական պատճառներով)՝**
   - Իտալիայում բնակվող որդու/դստեր ծննդյան վկայական,
   - ծնողների ընտանիքի կազմի վկայական,
   - Իտալիայում բնակվող որդու/դստեր կացության թույլտվության պատճեն՝ նոտարական թարգմանությամբ և հաստատված երկրի դիվանագիտական/հյուպատոսական հիմնարկում,
   - բժշկական փաստաթուղթ՝ տրված Իտալիայի դեսպանության լիազոր բժշկի կողմից, որով ապացուցվում է, որ մյուս երեխաները, լուրջ առողջական պատճառներով, ի վիճակի չեն ծնողների խնամքը հոգալ:

Վիզայի ձևաթուղթը կարելի է վերցնել www.esteri.it/visti կայքէջից:

**Նոր կանոնակարգով փոփոխություններ չեն նախատեսվում ներկայումս Իտալիայում գործող իտալացի քաղաքացու/Իտալիայում բնակվող ԵՄ անդամ պետությունների քաղաքացիների հետ ընտանիքի վերամիավորման ընթացակարգի մեջ:**

**Ընտանիքի վերամիավորում Իտալիայի քաղաքացու հետ**

- վիզայի դիմումի ձևաթերթ,
- անձնագրային չափսի լուսանկար (վերջին),
- անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ՝ առնվազն 3 ամսվա վավերականությամբ, հաշված վիզայի ժամկետի ավարտից,
- ԵՄ կամ Եվրոպական տնտեսական խորհրդի անդամ պետությունների քաղաքացիների դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի կամ անձնագրի պատճեն, ինչպես նաև հայտարարագիր, որով պահանջվում է, որ ընտանիքի անդամը ներկա գտնվի Իտալիայում, ևս մի հայտարարագիր, ըստ օրենքով նախատեսված պահանջների:
- ընտանիքի անդամների կապը վկայող վարչական փաստաթղթեր (ամուսնության վկայական, ծննդյան վկայական և այլն),
- անչափահաս երեխաների դեպքում՝ վիզա ստանալու համար գրավոր թույլտվություն մյուս ծնողի կողմից:

### Փախստականների ընտանիքի վերամիավորում

Կոնվենցիայի փախստականները ենթակա են վերամիավորման իրենց ամուսնու/կնոջ, չամուսնացած անչափահաս երեխաների, խնամարկյալ ծնողների և երրորդ աստիճանի հարազատների հետ, եթե վերջիններս անկարողունակ են: Չամուսնացած զույգերը ենթակա չեն վերամիավորման: Ընտանիքի վերամիավորման իրավունքը չի ենթադրում բնակարանային կամ ֆինանսական պահանջների բավարարում: Ապօրինի կերպով Իտալիա մուտք գործած անձինք նույնպես կարող են օգտվել ընտանիքի վերամիավորման կարգից: Ընտանիքի վերամիավորումը հնարավոր է իրագործել փախստականի կարգավիճակ ստանալուց անմիջապես հետո: Դիմումը պետք է ներկայացնի Իտալիայում բնակվող անձը Ոստիկանությանը, որտեղ կայացվում է առաջին ատյանի որոշումը: Բացասական որոշումները կարելի է բողոքարկել 1998 թ. Օտարերկրացիների մասին օրենքի հիման վրա:

## 7. Առողջապահության համակարգ

ԵՄ-ի ոչ-անդամ երկրների աշխատանքային պայմանագիր ունեցող քաղաքացիները կարող են օգտվել Իտալիայի ազգային առողջապահության ծառայություններից (Servizio Sanitario Nazionale) ընդհուպ մինչև կացության թույլտվության (Permesso di Soggiorno) ժամկետի ավարտը: Այս ժամանակահատվածում նրանք օգտվում են այն բոլոր առողջապահական օժանդակությունից, որոնցից օգտվում են Իտալիայի քաղաքացիները (հաշվառում Servizio Sanitario Nazionale համակարգում, նեղ մասնագետ բժշկի օգնություն, հիվանդանոցային բուժում, պրոտեզավորում և վերականգնողական բուժում):
Աշխատանք ունեցող հիվանդները իրավունք ունեն, ըստ օրենքի և հավաքական աշխատանքային պայմանագրերի, առավելագույն ժամկետով պահպանելու իրենց աշխատատեղը: Այս ընթացքում նրանք ստանում են աշխատավարձի որոշակի տոկոսի չափով ֆինանսական հատուցում: Այս արտոնություններից օգտվելու համար աշխատողը պետք է ներկայացնի հիվանդության մասին տեղեկանք և ենթարկվի պետական մարմինների կողմից հսկողության:
Կացության/աշխատանքի թույլտվություն չունեցող միգրանտները կարող են դիմել իտալական հիվանդանոցներ կամ ազգային բուժսպասարկման կենտրոններ և ձեռք բերել թեթև առողջական խնդիրների փաստաթուղթ (“tessera sanitaria leggera”), որով նրանք անվճար կարգով կօգտվեն հիմնական բուժօգնությունից և կստանան դեղորայք:

# 8. Սոցիալական ապահովագրության համակարգ

Ընդհանուր առմամբ Իտալիայում գործատուն իր տրամադրության տակ աշխատողներին ապահովագրում է՝ համաձայն Իտալիայի սոցիալական ապահովության օրենսդրության: Իտալիան 40 երկրների հետ ունի փոխադարձ սոցապահովության համաձայնագրեր, ըստ որոնց օտարերկրացին կարող է սահմանափակ ժամկետով մնալ իր երկրում գործող սոցապ համակարգի սխեմայում: Սոցիալական ապահովագրության միջոցով հատկացվում է գործազրկության, հիվանդության և ծննդաբերության, աշխատանքային վքարների և աշխատանքի բնույթի հետ կապված հիվանդությունների, ինչպես նաև ծերության, անկարողունակության, տուժածի/զոհի և ընտանեկան նպաստներ: Համակարգը ղեկավարում է Սոցիալական ապահովության ազգային ինստիտուտը (Istituto Nazionale della Previdenza Sociale/INPS): Երկրում բնակվող բոլոր աշխատողները և ինքնազբաղվածները մուծում են սոցիալական վճարներ. որոշ բացառություններով: Իր աշխատողների համար գործատուն կազմում է սոցապի բոլոր փաստաթղթերը: Աշխատողների սոցապ վճարները գանձվում են իրենց չհարկված աշխատավարձերից՝ գործատուի կողմից: Աշխատողների ստանդարտ սոցապ վճարների գումարը կազմում է չհարկված աշխատավարձի մոտ 10 տոկոսը:
Սահմանված են սոցապ վճարների տարբեր չափեր արդյունաբերության, առևտրի ու գյուղատնտեսության ոլորտի և գրասենյակային ու կառավարման ոլորտի աշխատողների համար, որոնց համար նախատեսված նպաստները նույնպես տարբեր չափի են:

# 9. Բնակարանային պայմաններ

Իտալիան Եվրոպայի ամենաթանկ երկրներից է և կենսապահովման ծախսն այնտեղ համեմատաբար մեծ է: Այնուհանդերձ գոյություն ունի զգալի անհամաչափություն ծախսերի և ապրելու ստանդարտների միջև բարգավաճ հյուսիսի և կենտրոնական շրջաններում և համեմատաբար աղքատ հարավում:

**Ծախսեր**

Բնակարանի վարձ՝ 300-1000 եվրո

Մեկսենյականոց բնակարանի ամսական վարձը կարող է կազմել 300-ից մինչև 1000 եվրո՝ կախված չափից և գտնվելու վայրից: Իտալիայում էժան բնակարան վարձելը բավականին դժվար է:

Կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրականություն, հեռախոս)՝ 60-100 եվրո

Սնունդ՝ 180 եվրո (ալկոհոլային խմիչքները չհաշված)

Հասարակական տրանսպորտ՝ 50-100 եվրո
Մեկ ամսվա կտրվածքով միջին ծախսեր (ապահովագրության վճարները չհաշված)՝ 590-1380 եվրո
Ավելին կարելի է տեղեկանալ http://www.lifeinitaly.com/rent/ կայքում:

## 10. Դիպլոմների ճանաչում

Դիպլոմները և վկայականները պետք է թարգմանվեն իտալերեն: Շատ մասնագիտությունների համար դիպլոմներն ու սերտիֆիկատները պետք է ճանաչվեն պաշտոնական մարմինների կողմից. Հնարավոր է, որ վերապատրաստման և որակավորման անհրաժեշտություն լինի՝ Իտալիայի պահանջներին համապատասխանելու համար: Ճանաչման գործընթացը հիմնված է անհատ դիմորդների ներկայացրած փաստաթղթերի վերլուծության և ակադեմիական և մասնագիտական բաղադրիչների գնահատման վրա:
Մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ արտասահմանում գտնվող իտալական դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկներից կամ Ազգային ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնից (Centro di Informazione sulla Mobilità e le Equivalenze Accademiche - Cimea), որի հասցեն է.
Fondazione Rui, viale XXI aprile 36, 00162 Roma
Tel: +39-06-32-12-81
Fax +39-06-86-32-28-45
E-mail: cimea@fondazionerui.it

## 11. Միգրանտներին աջակցող ծառայություններ

**Իտալիայի Արտաքին գործերի նախարարություն - Իտալիա**
հասցե՝ Piazzale della Farnesina, 1, 00194 Roma Main switchboard: 0039 - 06.36911 Website: http://www.esteri.it/

**Իտալիայի Հանրապետություն**
**Հայաստանի Հանրապետության դեսպանատուն**
Via Venti Settembre, 98/E, 00187 Roma, Italy
Tel.: (390 6) 3296638; 3297764
Fax:(390 6) 3297763
E-mail: embarmit@tin.it

**Իտալիայի Հանրապետության (Իտալիա)**
5 Italia street, 375010
Tel: 542335/36
Fax: 542341
E-mail: ambitaly@arminco.com

**Իտալական Կարմիր Խաչի ընկերություն**
Rome, Via Toscana, 12
Fax: 06.42012525
Email: urp@cri.it

**Իտալիայի արհեստակցական միությունները**

Արհմիություններն իրենց անդամներին առաջարկում են խորհրդատվություն և աջակցություն՝ աշխատավայրում ծագած խնդիրների և դժվարությունների վերաբերյալ: Խոշոր քաղաքների որոշ արհմիություններ ունեն գործազուրկների համար նախատեսված տեղեկատվական կենտրոններ (centro infomazione disoccupati), ուր կարելի է տեղեկանալ թափուր աշխատատեղերի, աշխատանք գտնելու և աշխատանքային կանոնակարգի վերաբերյալ:

**Իտալիայի արհմիությունների կոնֆեդերացիա՝ CISL – CESIL**
հասցե՝
Via Tadino, 31, 20124 Milano
Tel: 02. 29.52.84.23 (աշխատանքային հարցերով)
Tel: 02. 29.40.81.42 (ներգաղթելու հարցերով)
Fax: 02.29.40.90.64
E-mail: cesil@cisl.it
Web: http://www.cislmilano.it/

CISL-ը ապահովում է իրավախորհրդատվություն սովորական և փաստաթուղթ չունեցող միգրանտների համար:

**Իտալիայի Աշխատանքի գլխավոր կոնֆեդերացիա (CGIL) Centro Immigrati**
հասցե՝
Corso di Porta Vittoria 43, 20122 Milano, Italy
Phone: +39 02.55025253-4
Fax: ++39/02/5502.5294
E-mail: migranti.cdlm@mi.lomb.cgil.it
Web: http://www.cgil.milano.it

CGIL-ը Իտալիայի խոշորագույն արհմիությունն է: Այն ապահովում է իրավախորհրդատվություն և աջակցություն աշխատատեղերում չարաշահումներից տուժած աշխատողների համար:

<u>Իտալիայի հասարակական կազմակերպությունները</u>

**Caritas Diocesana di Roma/Area Immigrati (Միգրանտների խորհրդատվական կենտրոն)**
հասցե՝
Via delle Zoccolette 16-19 00185 Rome (Italy)
Tel: +39 066875228 or +39 066861554
Fax: +39 066833295
E-mail: centro.stranieri@caritasroma.it
Web: http://www.caritasroma.it
Ծառայություններ՝ իտալերենի դասընթացներ, սոցիալական օժանդակություն, իրավախորհրդատվություն, աշխատանքի և ինքնազբաղվածության հարցերում կողմնորոշում: Բոլոր ծառայություններն անվճար են:

**FCEI - Federazione delle Chiese Evangeliche in Italia - Servizio Rifugiati e Migranti**
**(Իտալիայի բողոքական եկեղեցիների ֆեդերացիա, փաստականների և միգրանտների ծառայություններ)**
հասցե՝
Via Firenze 38, 00184 - Rome
Tel.: 06 48 90 51 01
Fax: 06 48 91 69 59
E-mail: srm@fcei.it
Web: www.fcei.it
Ապահովում է խորհրդատվություն, սոցիալական օժանդակություն, սոցիալական և մշակութային ինտեգրում:

**Associazione Centro Astalli in Rome**
հասցե՝
Via delgi Astalli 14/a, 00186 Roma, Italy
Phone: ++ 39/06/6992.5099
Fax: ++39/06/6970.0306
E-mail: astalli@jrs.net
Web: http://www.centroastalli.it
Ապահովում է օժանդակություն փաստաթուղթ չունեցող միգրանտների համար:

**Associazione Santa Chiara in Palermo**
հասցե՝
Piazza Santa Chiara 11, 90134 Palermo, Italy
Phone: ++ 39/339/204.2745
Fax: ++ 39/091/322.868
Ապահովում է իրավախորհրդատվություն փաստաթուղթ չունեցող միգրանտների համար և առաջարկում լեզվի դասընթացներ:

**Associazione No.Di "I Nosti Diritti" in Rome**
հասցե՝
Borgo Pio, 15, 00193 Roma
Phone: ++ 39/06/683.3688
Fax: ++39/06/683.3688
E-mail: inostridiritti@yahoo.es
Web: http://web.tiscali.it/nostridiritti
Ապահովում է իրավախորհրդատվություն իգական սեռի միգրանտների համար:

**Comunità di Sant'Egidio**
հասցե՝
Piazza S.Egidio 3/a - Roma - Italia
Tel. +39.06/8992234
Fax. +39.06.5800197
Email: info@santegidio.org
Web: http://www.santegidio.org
Ապահովում է հիմնական օժանդակություն միգրանտներին:

**Casa dei Diritti Sociali in Rome**
հասցե՝
Via dei Mille 6, Rome 00185, Italy
Phone: ++39/06/446.46.13/06
Fax: ++39/06/446.47.42
E-mail: manberg@tin.it
Web: http://www.dirittisociali.org
Ապահովում է կացարան և մշակութային, սոցիալական, իրավական կողմնորոշման ծրագրեր Իտալիայի փախստականների, միգրանտների և փաստաթուղթ չունեցող անձանց համար:

**Fondazione Migrantes**
հասցե՝
Via Aurelia 486, 00165 Roma, Italy
Phone: ++ 39/06/66.39.84.52

Fax: ++39/06/66.39.84.92
E-mail: segreteria@migrantes.it
Web: http://www.migrantes.it
Ապահովում է օժանդակություն հիմնական կարիքների հարցերում (բնակարանի, առողջապահության և այլն): Հրապարակում է ամենշաբաթյա լրատու և ներգաղթողների հարցերով օրենսդրության և քաղաքականության վերլուծություն:

Առողջապահություն

**Medici Senza Frontiere - Missione Italia**
հասցե՝
Via Volturno 58, 00185, Roma
Tel. +39 06 44703855
Fax. +39 06 4451267
E-mail: emanuela.roscetti@rome.msf.org
Web: www.msf.it

**Poliambulatorio S. Chiara-Caritas per Cittadini Extracomunitari**
հասցե՝
Piazza Santa Chiara 11, 90134 Palermo, Italy
Phone: ++ 39/091/327.986
Տեղական կլինիկա, որն ապահովում է հիմնական օժանդակություն Պալերմոյի փաստաթուղթ չունեցող միգրանտներին և ուղղորդում է նրանց համալսարանական հիվանդանոց՝ մասնագիտացված բուժօգնության համար և օգնում ինտեգրվել Ambulatorio Medico Popolare in Milan-ի առողջապահական համակարգին:
հասցե՝
Via dei Transiti 28, 20100 Milano, Italy
Phone: ++39/02/26.82.73.43
E-mail: ambulatorio.popolare@virgilio.it
Կամավորների կազմակերպություն, որն ապահողվում է առողջապահական օժանդակություն բոլորի համար:

**NAGA - Asociazione Volontaria di Assistenza Socio-Sanitaria e per i Diritti di Stranieri e Nomadi**
հասցե՝
Via Zamenhof, 7, 20136 Milano, Italy
Phone: ++39 02.58.10.25.99
Fax: ++02.83.92.927
E-mail: info@naga.it
Web: http://www.naga.it

NAGA-ն հասարակական կազմակերպություն է, որն առաջարկում է սոցիալական և առողջապահական օժանդակություն այն ներգաղթողներին, ովքեր, իրավական, տնտեսական կամ մշակութային պատճառներով, չեն կարող օգտվել Հասարակական առողջապահության ծառայությունից:

**Միգրացիայի միջազգային կազմակերպութուն Իտալիայում (IOM)**
հասցե՝
Via Nomentana 62, 00161 Rome, Italy
Tel: +39.06 442 31 428/439/434
Fax: +39.06 440.25.33
E-mail: MRFRome@iom.int
Հռոմի IOM-ը հատուկ ծրագրի միջոցով օժանդակում է թրաֆիկինգի զոհերի կամավոր վերադարձի և վերաինտեգրման հարցերում:

# 12. Քաղաքացիություն

Իտալիայի քաղաքացիություն կարող է ավտոմատ կերպով ձեռք բերել՝
- այն երեխան, ով ծնվել է իտալացի ծնողից («jus sanguinis» սկզբունքով՝ծնողների քաղաքացիության հիման վրա),
- այն երեխան, ով ծնվել է Իտալիայի տարածքում պետություն չունեցող ծնողներից, անհայտ ծնողներից կամ իրենց քաղաքացիությունը երեխային փոխանցել չկարողացող ծնողներից («jus soli» սկզբունքով՝ ըստ ծննդավայրի),
- այն երեխան, որ ճանաչվել է ծնողի/մոր կողմից կամ որդեգրվել է:

**Հատուկ դիմումի միջոցով**
- Այն անձինք, ովքեր ծագումով իտալացի են (ընդհուպ մինչև երկրորդ աստիճանի) և ծառայել են Իտալիայի զինված ուժերում կամ քաղծառայության ոլորտում կամ էլ երկու տարի՝մինչև չափահաս դառնալը, բնակվել են Իտալիայում,
- Եթե դիմորդը ծնունդով իտալացի է, պետք է ծնվելու օրվանից մինչև չափահաս դառնալը շարունակ Իտալիայում ապրած լինի:

**Ամուսնության առիթով**
Իտալիայի քաղաքացու կինը/ամուսինը՝ օրինական հիմունքով վեց ամիս Իտալիայում բնակվելուց հետո կարող է ձեռք բերել Իտալիայի քաղաքացիություն հպատակագրման միջոցով կամ էլ երեք տարվա ամուսնության դեպքում (բնակվելով այլ երկրում), պայմանով որ չի ունեցել գրանցված իրավախախտումներ կամ վտանգ չի ներկայացրել պետական անվտանգության առումով:

Հպատակագրման միջոցով

- Այն անձինք, ովքեր 10 տարի օրինական կարգով բնակվել են Իտալիայում և չեն ունեցել գրանցված իրավախախտումներ, և ունեն բավարար ֆինանսական միջոցներ, կարող են ստանալ քաղաքացիություն (երեք տարի՝ նախկին իտալական քաղաքացիների համար, ընդհուպ մինչև երկրորդ աստիճան և Իտալիայի տարածքում ծնված օտարերկրացիների համար, չորս տարի՝ ԵՄ անդամ պետությունների քաղաքացիների համար, հինգ տարի՝ փախստականների և պետություն չունեցող անձանց համար և յոթ տարի՝ «Իտալիայի քաղաքացու հետ միավորված» անձի համար)

Հավելյալ տեղեկության համար այցելեք http://www.migramedia.it/mie_cartelle/ducumenti/informated_migration/5_IT.pdf կայքը: